



891.99
C-28



ԱՐԵՎԱՆԴԻՐ ԶՈՅՆԵՐ
ԹԻՇԵՑՔ ՔՍԱՆԸ



891.85
6-28

19 NOV 2011

493

ՎՐԵԺԻՆԴԻՐ ԶԱՅՆԵՐ

ՅԻՇԵՑՔ ՔՍԱՆԸ

ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՆՈՒՐՈՒԱԾ ՔՍԱՆ Ս. Դ. ՇՆՋԱԿԵՄՆԵՐՈՒ ԱՆՄԱՀ
ՅԻՇԱՏԱԿԻՆ. ՈՐՈՆՔ ԶԵՐՈՍԱԲԱՐ ՆԱԶԱՏԱԿՈՒԵՑԱՆ
ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ Ի ՊՈԼԻՍ. 1915

ԻՆՔՆԱՏԻՊ ՆԿԱՐՆԵՐՈՎ

ՃԵՂԻՑԱԿՈՒՐԻՒՅ Խ. ԳԹԱԳՐՈՒՐԻՒՅ

ԱՐՑԱԽԻՔ Պ. ՇԱՄԼԵԱՆԻ

ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆ

1918

COPYRIGHT 1918 BY
A. SHAMLIAN
TROY, N. Y.

13 JUL 2013

99184

REVENGEFUL VOICES

REMEMBER The TWENTY

POEM

DEDICATED TO THE ETERNAL MEMORY OF THE
TWENTY ARMENIAN S. D. HUNCHAGISTS, WHO
WERE HEROICALLY MARTYRED FOR THE FREE-
DOM OF THEIR FATHERLAND IN
CONSTANTINOPLE, A. D. 1915

ILLUSTRATED BY THE AUTHOR
ARSHAVIR B. SHAMLIAN

YERAN PRESS
1918

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Ներկայ հատորը որ իմ գրական աժխատութիւններու անդրանիկ երկն է, լոյս կ'ընծայեմ տասնեակ մը գեղարուեսական նկարներով ու շենդ կողեով զարդարուած:

Ինչպէս բանասեղծութիւնը իմ գրչին, նոյնապէս եւ նկարները իմ սեպիական վրձինի արտադրութիւններն են, բոլորով ին ի ն ք ն ա ս ի պ (original) :

Նկարը խորհուրդի կամ գաղափարի մը խսցումն է: Այն ինչ որ պիտի բացատրով գրաւոր կերպով, բանի մը էջերու վրայ, կարելի է ցուցադրել նկարով մը, մեկ էջի վրայ միայն, ու այս երկուքի միացումն է ահա որ աւելի ազդու, աւելի որու կերպով կը պարզէ հեղինակին խորհուրդներն ու զգացումները:

Այս համոզումով է որ սոյն հատորը պահպատճ հրապարակ կը հանեմ, որու համար ցոյց տրուած համակրութենեն բազալերուած, պիտի ջանամ մի ս աշխատութիւններս ալ, նոյնպէս, աւելի նոյն եւ ընսիր նկարներով զարդարուած հրապարակ հանել:

Յուսամ արուեստի եւ բանասեղծութեան այս զուգընթացութիւնը Ամերիկանայութեան համար նորութիւն մը ըլլալով հանդերձ, պիտի դառնայ նաեւ սիրելի:

ԱՐԴԱՒԹԻՐ Պ. ՇԱՄԼԵԱՆ
1918 Թրոյ, Ն. Ա.



55404-66

ԹՐԻԲԱԿԱՆ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԵԱՆ ԱՌԱՋ

«Քսան Հնչակեաններ կախւած», — աշա՞
տին անհունօրէն ողբալի ու շանթահարիչ լուրը,
որ մեզ զալիս է տառապանքի ու զուրումի աշ-
խարհից : Քսան Հնչակեաններ, քանին էլ չեղա-
փոխական զրչել ու խօսքի, գաղափարի ու զործի
ձաքուր, իդէալական տիպարներ, որոնց կեան-
քը համակ նւիրում էր տանջւողների գատին :

Դեռ մի շարաթ տառջ էր, որ մենք լսեցինք
վանի մեր չորս անձնուրաց ընկերների նահատա-
կութեան լուրը : Մեր զգացած ցաւը չափազանց
մեծ էր աշութիւն ու մենք սրտի զատն կոկիծով
ողբում էինք նրանց վազաժամ մահը ազատու-
թեան ճանապարհին : Բայց զազան բռնակալու-
թիւնը մեզ համար պատրաստել էր մի ուրիշ ա-
ւելի ծանր ու աշաւոր ողբերգութիւն, որ պիտի
զար ցնցելու մեր էութիւնը, սարսուռով պատե-
լու մեր միտքն ու հոգին . նա ծրագրել էր մեր
կուսակցութեան եռանդուն ու վառվուն ոչիշ-
րի, ականաւոր գործիչների եղերական վախ-
ճանը :

Եւ գործւած ոճիւր այնքան հրէ շալին ու բար
բարսական է, որ երևակացելն անզամ անկա-
րելի է : Թիւրք կառավարութիւնը, ամիսներ շա-
ռունակ, մեր ողբացեալ ընկերներին բանուերի
անլուր զրկանքներին ենթարկելուց յետով, կա-
խազանով վերջ է տալիս նրանց կեանքին, լոկ
իր զազանալին կիրքը չափեցնելու, Հնչակեան
կուսակցութիւնը բնաջնջելու և Հայութիւնը պա-
տուհասելու համար : Եւ որպէս զի հրապարա-

կով կարողանալ արդարացնել իր ացք քսամնալի-
եղեանազործութիւնը, նա օրէնքի անունով մի
զատապարտութիւն է կարգում : Անբաստանւած
Հնչակեանները պահանջել են «անկախ» Հայաս-
տան, այսինքն ձգտել են անջատողականութեան
և այդ նպատակով «կաղմակերպել են ոճրափոր-
ձեր», — աշա՞ թէ ինչպիսի շինծու պատրւակնե-
րով է նա ցանկանում օրինականացնել իր արիւ-
նու արարքը :

Սակայն, Թիւրք կառավարութեան կողմից
ցոց տրած այս ողործելի պատճառաբանութիւնը
աւելի հս ծանրացնում է նրա պատասխանա-
տութիւնը, որովհետև զա մի ստոր չերիւրանք
ու բացարձակ զրպարտութիւն է : Եւ արդէն ու-
րիշ բան էլ չէր կարելի սպասել այն կառավա-
րութիւնից, որ անինաց հարածանքի ու համա-
տարած տեսօրի միջոցով իրեն նպատակ է ընտ-
րել բաղկացուցիչ ազգերի, ճանաւորապէս հաչ-
ժողովուրդի կործանումը և նրա իդձերը հարա-
զատ թարգման տարբերի բնաջնջումը :

Այս անորակելի ոճիրը, հետեաբար, գալիս
է մի նոր ռե էջ աւելացնելու թրքական գարաւոր
բարբարսութեան աարեզրութիւնների վրա :
Նա էլ կարմիր տառերով սլոտի արձանազրուի աւ-
րինի ու սարսափի այն եղական պատճութեան
մէջ, որ թուրք բռնակալութեան յաւիտենական
դատակնիքն է մարդկացին սերունդների առաջ :

Պատճական անցիշատակելի ժամանակներից
մինչեւ այսօր . չէ եղած մի բանապետութիւն, որ
թիւրք կառավարութեան նման մշտենջնապէս
քանդող ու աւերող ոչի լինէր : Ազգերի պատճու-
թիւնը, ճիշտ է, ճնունդ է տեկ շատ ու շատ բը-

նապետութիւնների, բաց նրանք բոլորն էլ, կարձ շրջանից յևոյն, զագարել են աշնողիսի մի կործանարար ոչ զանալուց, ինչպիսի եղել է թիւրք բոնապետութիւնը իր ծագման օրից մինչև հիմա : Ներօնները բացառիկ դիմքեր են և դել . նրանք յանկարծական կիկլօնների նման եւ կել փոթորկել են ազգերի կեսնքը և ապա անհետացել ընդմիշտ : Բաց թիւրք բոնապետութիւնը երբեք չի փոխել իր ներօնական պատկերը . նա մշապէս վանսալականութիւն ու բարրաբառութիւն է զործել, մաս ու սարսափ սփուելով ամենուրեք : Վեց հարիւր տարւաչ պատմութիւնը ցաւի ու տանջանքի, թալանի ու կոտորածի, մի խօսքով ներօնական նախճիրների մի անիշերջ ու անծայր շարան է :

Այսօր թիւրք բոնապետութիւնը, յանձին իթթիչատի, զարձեալ շարունակում է իր բարբարսական արշաւանքը : Նա իր կատաղութեան կաթնակէտին հասած՝ աւերում, քանդում է բուրոր հայրենակ վայրերը, ջարդում, կոսորում է տասնեակ հաղարաւոր անձեզներ և ի լրումն աց բուրոր ոճիրների, սպառերազմական տաեանների միջոցով և անհիմն մեզաղանքներով կախազանների վրայ և բանաերում սպաննում է ժողովրդի աղատութեան նիրտած դաղափարական առաքեալներին : Բաց արիւնարրու իթթիչատը չի կարող ացղպիսի զաղրելի ոճիրներով իր նազատակին հասնել : Հայր վեց դար շարունակ աղբեցաւ, թրքական եաթաղմանը չկարողացաւ մինչև աշխատ վերջ առաջ նրա գոյցութեան, և նա լնդհակառակը, բոնութեան արհաւիրքների մէջից միշտ ձգտեց աղատութեան : Նա կռւեց, մարտն

չեց իր դահիճների դէմ և մնաց միշտ նոյն անընկ ձեւի սաղմէկը :

Դեռ երէկ, խարուսիկ սահմանադրութեան ժամանակ, իթթիչատը կարծում էր թէ՝ իր քնարերգական խստումներով պիտի կարողանայ լուցնել Հայութեան արդար բողոքը : Անձնատուր իր երազներին, նա օրուում էր այն սկարանքներով թէ՝ ազես անարգել պիտի կարողանայ իրագործել իր համիլամական ու համաթրքական ծրագիրը : Բաց նա շուտով տեսսաւ՝ «որ Հայը երբեք տրամադրիր չէ «կաթիլկաթիլ մեսնելու» և պատրաստ է միշտ, ի դին ամեն զոհողութիւնների, կուր մղել իր ազգացին և մարդկացին իրաւունքների համար :

«Հայը մի անդամ էլ պէտք է մեսնի, որ Հայը ապրի», — այս էր եղել մեր նահատակ ընկերների կարգախօսը : Եւ այսօր Հայութիւնը իր մղած հերոսական կուռվ հետեւում է ացդ կարգախօսին : Նա իր արիւնը մի անդամ էլ, և վերջին անգամ, թափում է իր հայրենիքի ինքնավարութեան համար :

Ռւտիթ թրքական այս նոր բարբարոսութեան առաջ, մարտնչող Հայութեան սրտում միայն մի զգացում է ամբարում, դա վրէժինդրութեան սրբազն զգացումն է : Եւ ուշ չէ այն օրը, երբ նա որպէս մի ոռումբ պիտի պատմի բոնականների պիսին :

ՅԻՇԵՑԷՔ ՔՍԱՆԸ

ԺԱՇԺԱՋ

Փարամազ
Արամ Սէզպատեան
Տօքոր Պէննէկ
Վաննիկ
Ռուրիկ Կարապետեան
Երուանդ Թօփուզեան
Հրանդ Ռեղաւեան
Յով. Տէր Դազարեան
Մինաս Բէշիչեան
Սմբատ Գլնեան
Սրբահամ Մուրատեան
Մկրտիչ Մուրատեան
Յակոբ Պասմանեան
Գարեգին Պօղոսեան
Երեմիա Մարոսեան
Գառնիկ Պօյանեան
Արմենակ Համբարձումեան
Թօվիմաս Վահան Թօվիմասեան
Պօղոս Պօղոսեան
Մուրատ Դազարեան


ՅԱՆԿ ՆԿԱՐՆԵՐՈՒԻ

ԺԱՇԺԱՋ

Թիւ

	Էջ
1 Յլի ըստւ նա իր դահճապետին	17
2 Մուէզզինը առտուան աղօթքը չըսած	25
3 Մութ մոայլ բանտի	31
4 Վերջին բաժանման հնջած է փողը	37
5 Անշուք և անյայտ շիրիմներուդ ներքեւ	45
6 Նորէն հայ մայրը զաւկին մարմնոյն քով	51
7 Իր կնոջական քնքոյշ ձեռքերով	57
8 Նոր ծառեր տնկեց, ոռոգեց այգին	63
9 Հոյակապ մարմար կամարին ներքեւ	73

— «Ալի՛, ըստ նա իր դահճապետին,
Ալի՛, այստեղ քեր բանտարկեալներուն,
Բե՛ր որ ցուցունեմ ես այդ ժամկին
Ի՞նչպէս կ'ունենան ազատ Հայաստան :



ԱՊ. Շամիլ

ԱԼԻ, ԸՍԱԿ ԿՈ ԱՅ ԹՈՀԱՐՎԵՏԻՆ, ԱՅՍԵՐ, ԲԵՐ ԲԱԽՈՐԴԵՈՒԵՐԻՆ

ՎՐԵԺԻՆԴԻ Ր ԶԱՅՆԵՐ

ՅԻՇԵՑՒՔ ՔՍԱՆԸ

Ա.

Եւ կնվեր Պէյը քաշեց երկսայրին
Հանեց արիւնու սուրբ պատմանին,
Նա կ'ուզեր լուծել իր խոր վրէժը
Իր հին վրէժը անմեղ հայերէն :

Բ.

Նա զայրացած էր, կատղած խիստ կերպով.
Կրակ կը ցայտէր վայրագ աչքերէն
Ուսկի գահին վրայ ահաւոր ձայնով
Խիստ հրամաններ կ'ուտար աջ ու ձախ :

Գ.

Ալլահի կամքով իրեն յանձնեած
Խալիֆայութեան հովանին տակ,
Ինչպէս կրնային հայերն ստրուկ
Ազատութեան խօսքը ընել համարձակ :



Դ.

— «Ալի՛, ըսաւ նա իր դահնապետին,
Ալի՛, այստեղ թեր բանտարկեալներուն
Բե՛ր որ ցուցունեմ ես այդ Քսանին,
Ի՞նչպէս կ'ունենան Ազատ Հայաստան :

Ե.

Հոս թե՛ր, որ անոնց ակռաներն փշրեմ
Թեր որ մազերնին մի առ մի քաշեմ,
Որ ազատութեան անունն անգամ
Այդ կեաւութեները թերաննին չ'առնեն :

Զ.

Ու դահնապետը սեւամորք Ալին
Մինչեւ զետինը խոր գլուխ տալով,
Գնաց հեռացաւ արագ ժայլերով
Բանտարկեալները պալատը թերաւ :

Է.

— «Կեավուրեներ, պոռաց՝ կատղած ինվերը,
Կեավուրեներ դո՞ւֆ է՛ Հայաստան կուզէ՛,
Հիմա կը ցուցնեմ ես ձեզ բոլորիդ
Հիմա՝ կ'ուտամ ձեզ Ազատ Հայաստան» :

Ը.

Ու կատաղաբար ձեռքի մտրակով
Տաւ հարւածներ իր բոլոր ոյժով
Զարկաւ ազ ու ճախ, զարկաւ ամենուն
Ու չխնայեց նա եւ ոչ մէկուն :

Ժ.

— «Տէ՛ր, ըսաւ հանդարտ հէ՛ Տօֆքօր Պէննէն,
— Թո՞ղ տուր ատոնց որ ազատ տուն երքան,
Ատոնիք անմեղ են, իմս է յանցանիքը
Պատժէ ինձ այնպէս, ինչպէս որ կ'ուզես :

Ճ.

— Լոէ՛ դուն կեավուր, ո՞վ ֆեզ քոյլ տւաւ
Որ իմ գործերուս խառնիս այդպէս,
Միքէ՞ չեմ զիտեր ումն է յանցանիքը
Դուն քու կարն խելքով ինձ դա՞ս տալ կ'ուզես :

ՃԱ.

Եւ յարձակեցաւ
Հէ՛ բժիշկին վրայ .
Հարւածներ տւաւ
Ծանր անխնայ :

ՃԲ.

— «Կանգ ա՛ն ոնքագործ, ձայնեց Աչզապաշը,
— Ալ բաւական է, կանգ առ ֆեզ կ'նեմ,
Թէ Հղադրեցնես այդ վայրագութիւնը
Հիմա ձեռքովս գլուխ կը փշրեմ :

ՃԳ.

Ու նետւեցաւ շիտակ ինվերին դիմաց
Նզրայած ձեռքերը բարձր օդին մէջ,
Դէմքը ահաւոր աչքերն ուռած
Կարծես առիւծ մէր լեռներէն իշած :

ՃԴ.

Հոգեկան բուռնի ցասումը դէմքին
Կանգնեցաւ լրոյստ հրէշին առաջ
Եւ իր տիրական ճայնովը հաստատ
Խօսեցաւ անվախ, սրտով համարձակ:

ՃԵ.

— «Երկար տարիներ անդուլ անընդհատ
Գործեր ենի միշտ մենի այս երկրին համար,
Հալալ վաստակի նամրէն հնազանդ,
Քալեր են ընդմիշտ վեց դարեր երկար:

ՃԶ.

Բայց երբէք մի օր չնանչցաք մեզի
Տնիք մեզ բաժին հուրի եւ սուրի:
Նոյն իսկ մարդկային իրաւուքներու
Են տարրականը զլացաք մեզի:


ՃԷ.

Ո՛չ տունը մերն էր. ո՛չ եկեղեցին
Օրէնքին առաջ չունէինք մենի ճայն՝
Վաղուց դարձեր էր գերի ճեր կամքին
Եւ կեանի եւ պատիւ ու ազատութիւն:

ՃԸ.

Այժմ բող շողայ
Սուրբ պողպատեայ,
Ահարկու ոռոմքը
Հուժկու որոտայ

— Ալի՛, մրմնչեց, վախով մէկուսի,
Ալի՛, տար ասոնք դեռ լոյսը չբացուած,
Այս Սօֆիայի մեծ մինարէքէն
Մուկզզինը առոռուն աղօքք չըսած:



મારી દુનિયા વિના પ્રાચીનતાઓની મારી દુનિયા વિના

Քանի հասած է
Ժամը փրկութեան
Բախտն ալ մեր ձեզմէ
Լինի քող բաժան :

ՃԹ.

Որպէսզի զիտնաք ո'վ ոճրագործներ
Թէ հայն ալ իր ազատութեան համար
Կարող է կռուիլ եւ պատռվ մեռնիլ
Ու լաւ է մեռնիլ քան ստրուկ լինիլ» :

Ի.

Դողաց կնվերը, ետ ետ քաշւեցաւ
Գեռ եւ ոչ մի Հայ կրցած էր այդպէս
Ցանդուզն կերպով կանգնիլ իր առաջ
Խօսիլ համարձակ իր ուզածին պէս :

ԻԱ.

— «Ալի՛, մրմնիցեց վախով մեկուսի
Ալի, տար ասոնք դեռ լոյսը չքացւած,
Այա-Սօֆիայի մեծ, Մինարէթէն,
Մուկզզինը առտւան աղօքքը չըսած :

ԻԲ.

Տա՛ր գեղածիծաղ Ռափորի ափին
Բարձր փայտերէն կախէ ամենը,
Եւ քող դաս լիմի բոլոր հայերուն
Որ ալ չյիշեն Ազատ Հայաստան,

Ի՞՞.


Ու հրամաններ տուր իմ քաջ զօրքերուն
Երբան կոտորեն ամրող Հայ ազգը,
Այնպէս մը ջարդեն այնպէս կոտորեն
Որ քար մը քարի վրայ չձգեն :

Ի՞՞.

Ըսէ՛ չխնայեն ոչ ծեր ու մանուկ՝
Հանդիպած հայուն թռ'կ ողջ ողջ վառեն
Այնպէս մը աւրեն որ յիսուն տարի
Թռղ ազատութեան երազն չտեսնեն» :



Մութ մոայլ բանտի երկարեայ դոնէն,
Դուրս բերին կարգաւ բանտարկեալները.
Ու շարան շարան, սինով պատած
Տարին շատ հեռու անյայտ վայրերը :



Ա Շահնշահ

ՄՈՒԹ ՄԹԱՅԻ, ԲԱՆՏԻ ԵՐԿԱԹԵԱՅ ԴԻՆԵԱ ԴԱՒՐՍ ԲԵՐԻՆ ԿԱՐԳՈՎ, ԲԱՆՏԱՐԿԵԱԼԵՐԻ

իԵ.

Առտուանց կանուխ երբ դեռ արեւը
Զեր սփռած տակաւին կենատու լոյսը ,
Իոր քնոյ մէջ էր սեզ Սրամպուլը
Փողոցներու մէջ դադրած էր կեանիքը ,

իԶ.

Մուը մոայլ բանտի երկարեայ դոնէն ,
Դուրս բերին կարգաւ բանտարկեալները ,
Ու շարան շարան սուխնով պատած ,
Տարին շատ հեռու , անյայտ վայրերը :

իԷ.

Բոլորն ալ Հնչակի բովքին մէջ քրծւած
Թւով միմիայն Քսան հաս էին ,
Հպարտ էին անոնք , հպարտ քան աշխարհ
Վախի երկիւղի նշոյլ չունէին :


իԸ.

Արդէն գիտէին քէ իրենց համար
Վերջին բաժանման հնչած էր փողը
Մահը դրան քով կազմ ու պատրաստ էր
Թէ իրենց համար փորուած էր հողը :

իԹ.

Բայց նահատակւած Հայ ազգի սիրոյն
Մեննիլը նոյնիսկ շնորհ մ'էր իրենց ,
Մահը քաղցը էր եւ չունէր խայրոց
Կարծես հարսնիքի տանէին իրենց :

Արդեն զիտէին քէ իրենց համար
Վերջին բաժանման հնչած է փողը,
Մահը դրան քով, կազմ ու պատրաստ էր
Թէ իրենց համար փորուած էր հողը :



U.P. (Washburn)

I.

Յառաջ էր ընկած քաջ Փարամազը
Թիւպէտ երկարեայ շղթան ձեռքերուն,
Քովէն քալէին հանդարտ անվրդով
Աչընդաշ, Վաննիկ եւ Տօքքօր Պէննէն:

I.II.

Եւ սհա մուքին մէջէն երեւցան
Կախաղաններու ձողերը փայտէ,
Զիւնորնէր վայրագ շուրջը շարւեցան
Զէնքերնին պատրաստ կ'սպասէն իրենց:

I.III.

Լուռ էր գիշերը եւ ձայն մ'խսկ չկար
Լուսինը վախսէն կարծես պահւած էր
Լուռ էին Ռափորի ջրերն փրփրու
Զեփիւնն ալ բռնած սիւժը մեղօրօր:

I.IV.

Չկա՛ր ոչ մի Հայ, չկար Քահանայ
Որ մխիքարութեան խօսքը մրմնչէր,
Չկա՛ր հայր ու մայր, եւ ոչ ալ ընկեր
Ծովն էր բարեկամ աստղերը վկայ:

I.V.

Անվախ Փարամազն յառաջ շարժեցաւ
Կախաղանի մօտ հանդարտ կանգնեցաւ,
Նայեցաւ չորս կրող կանգնող զօրքերուն
Արգահատանի ժպիտը դէմքին:

I. b.

Ապա համբուրեց իր ընկերները,
Համբոյրն ա՛լս ինչքան տափ ու ջերմին էր
Արեան եղբայրներ էին բոլորը
Մերը սրտին մէջ որչափ խորութիւն էր :

I. զ.

— «Ե՞հ, մնափ բարով, անգին ընկերնե՛ր,
Հասաւ մեզ համար վճռական բոպէն»:
Չայնեց Փարամազը քաղցր շեշտով մը
Սրտապնդելով իր ընկերները:

I. է.

— «Քաջ եղէ՛ք, տղերք, երբե՛ք չվախնաք
Նորէն իրաք հետ կը տեսնիք վերը :
Մենինք պէտք է մեննինք, ընկերներ անգին
Մեննինք որ կեանք տանիք տարաքաղդ Հային,

I. ը.

Թոն' ապրի՛ յաւէտ ուխտը Հնչակեան
Կեցցէ՛ հայկական յեղափոխութիւնն համայն
Եւ ողջ մնացող մեր ընկերները
Ցտուա՛ց տանին այս գործը սրբազն» :

I. թ.

Բսաւ ու նետեց պարանը վզին
Ազնիւ գլուխը շարժեցաւ մէկ կողմ,
Մարմինը մնաց կախւած օղին մէջ
Քանի մը վայրկեան, եւ ա՛լ չկար նա :

II. ։

Կարզը եկած էր Տօֆքօր Պիննիկին
Նա եւս յառաջ շարժեց անայլայլ,
Կանգնեցաւ խրոխտ կախաղանի մօտ
Բարձրացուց ձայնը այսպէս խօսեցաւ :

II. ս.

— Դուք մեզ կը կալսէք որպէսզի խեղդէ՛ք
Արդար բողոքի, եւ խղճի ձայնը
Մեր այս ժամանին դուք կը մեռցնէք
Որպէսզի խեղդէ՛ք նաև մեր դասը :

II. թ.

Բայց զիտցէ՛ք, վազը մեր եղբայրները
Մեր ազատութեան դրօշը պարզած,
Առիւծի սրտով հովերու նման
Քսան հազարով վրէծի պիտի զան :

II. զ.

Պիտի զան այս՝ քար ու քանդ ընեն
Զեր այս որջացած արհուտ գահերը .
Հնի պիտի կանգնեն սեւ զահի փոխան
Մեր իրաւունիքի հոյակապ խորան» :

II. դ.

Նա եւս նետեց պարանը վզին
Ակնթաքքի մէջ նա ալ հեռացաւ,
Աչքերը փակեց լոեց յաւիտեան
Զկար Տօֆքօրը, նա ալ մեկնեցաւ :

ԽԵ.

Ու այնուհետեւ քաջ Աչզպան էր
Որ երեսուն տարի Հնչակի ուխտով
Զոհած քսակը, պատիւն ու փառքը
Իր ազգի սիրոյն զոհեց եւ կեանիքը :

ԽԶ.

Անցաւ ու գնաց Կարապետեանը
Հնչակի չափ իին անվեհեր Ռուրէնը,
Գնաց եւ Վանայ մատաղ եղինիկը
Զկար այլեւս հրաշակի Վաննիկը :

ԽԵ.

Դացին եւ կարգով միւս տասնեւիննոցը,
Դացին բոլորն ալ տակաւին կ'երթան .
Ասօ, Բրուտեան, Հայկակ, Սոլախեան,
Եւ անզուգական Գագիկ Օզանեան :


ԽԸ.

Ու կարաւանը չունի վերջ վախճան
Ո՞վ զիտէ վաղը ովքեր պիտ երթան
Բոլորն ալ գացին ա՛լ ետ չեն դառնար,
Բայց գործը չի մեռնիր, կապրի յաւիտեան :

ԽԹ.

Անշուր եւ ամիյայտ շիրիմներուդ ներքեւ
Քնեցէ՛ք խաղաղ ազնիւ ընկերներ,
Զեր նիրիք յաւէտ լինի անվրդով
Քնեցէ՛ք հանգիստ հերոս եղբայրներ :

Զեր զերեզմանը մեր ուխտավայրն է,
Մեր պաշտամունքի նորագոյն տաճար,
Այնուեղ Հայ-ցաւի խաչըն է կանգնած
Եւ ազատութեան սերմերը ցանւած :



Առաջնաբան Արքայի Շիրամաներության Ներբան

Ծ.

Չեր զերեզմանը մեր ուխտավայրն է,
Մեր պաշտամունքի նորագոյն տաճար,
Այսուեղ Հայ-ցափի խաչըն է կանգնած
Եւ ազատութեան սերմերը ցանւած :

ԾԱ.


Թող ա՛լ աշխարհի հովն ու մբրիկը
Զ'յուզեն թնաւ ձեր վեհ սիրտերը,
Խաւարը երբէք չ'ահարելիէ ձեզ.
Մօռ է բացւելու հեռու չէ լոյսը :

ԾԲ.

Համբոյր անծանօթ ձեր հոդակոյտերուն
Համբոյր ձեր յոզնած, տանջւած սնարին,
Դուք կատարեցիք նվիրական պարտքը,
Քնէ՛ք ընկերներ մենք ալ պիտի գանք :



Նորէն Հայ մայրը զաւկին մարմնոյն քով .
Աղի ու լեղի արցունիքն աչերուն ,
Գետինը փոռւած , լացաւ ողբալով .
Անհուն ցաւի մէջ եւ ինչպէ՞ս չլար :



ՆՈՐԵ ՀԱՅ ՄԱՅՐԸ ԶԱԿԻՒ ՄՈՐՄՆՈՅՆ ՔՈՎ,

ԾՊ.

Նորէն հոսեցաւ հայերու արիւն,
Դաշտէր ու լեռներ ներկւեցան կարմիր,
Սուզ ու շիւանը պատեց ամեն կողմ՝
Ծուխն ու բոցերը քարձրացան երկինք:

ԾԴ.

Նորէն Հայ մայրը զաւկին մարմնոյն քով,
Աղի ու լեղի արցունիքն աչքերուն,
Գետինը փուած լացաւ ողբալով,
Սնիուն ցաւի մէջ, եւ ի՞նչպէս չ'լար:

ԾԵ.

Քսան տարի առաջ երբ նա փոքր էր
Մանկական դրօշմը դեռ քարմ նակատին,
Երբ կարի հոտը կ'ուգար քերանէն
Ու դեռ չէր բացւած կապանիք լեզւին:


ԾԶ.

Կտրին հայրիկն ու եղբայրը զարկին
Տունը վառեցին քանթեցին այգին.
Տարին արօրը, տարին եզները
Յորենն ու զարին, ոչինչ քողուցին:

ԾԷ.

Հազիւ կրցած էր տարաբաղդ մայրը
Ազատել միայն վոնք մանուկը,
Արիւն քրտինեռով յոգնած ուժասպան:
Ժամու բակին մէջ իյնալ շնչասպան:

Իր կնոջական քննոյշ ձեռքերով
Փորեց կոշտ հողը բահ ու բրիչով։



ԻՐ ԿԱՌՈՅԱԿԱՆ ՔԵՐԱԿ ԶԵՄՐԵՐՈՎ,

ԾՀ.

Այն օրէն ի վեր նա սեւեր հագաւ,
Սեւ կապեց զլխին նստեցաւ այրի.
Ու երբեք մի օր արցունիքը աչքին
Զ'անցաւ մորմոնքը, կսկիծը սրտին:

ԾԹ.

Սեւ սաք մազերը փոխւեցան ներմակ,
Թախիծը պատեց իր դէմքը համակ,
Այտերը կարմիր դեղնեցան վաղուց,
Աշերուն հուրը մարեցաւ գնաց:

Կ.

Բայց սրտակեղէք այդ ցաւի մէջ իսկ
Չվլիասեցաւ, չ'ընկնեցաւ երբեք
Առնական սրտով փարեցաւ հողին
Պինդ կապւած մնաց հայրենի շէմքին:


ԿԱ.

Իր կնոջական ֆնենյշ ձեռքերով
Փորեց կոշտ հողը բահ ու բրիչով,
Նոր ծառեր տնկեց, ոռոգեց այգին,
Աւերակներէն շինեց հոն նոր բոյն:

ԿԲ.

Եւ տաք արցունիքով քրչեց բողբոջը,
Յետին մնացորդը՝ քանդւած այգիին,
Ամառան տաքին ձմեռւան ցուրտին,
Հսկեց անհանգիստ նիշդ քսան տարի:

Նոր ծառեր տնկեց , ոռոգեց այզին
Աւերակներէն շինեց մի նոր բոյն :



A. Shamlian

ԿՊ.

—«Գուցէ—ըստ նա կը մեծնայ բալաս,
Կը ծխայ մարած օնախս վերստին,
Ու ես կը մոռնամ իմ հին ցաւերս,
Եւ երկինք նորին ժպտի երեսիս :

ԿԴ.

Վերջին օրերըս այս աշխարհիս մէջ
Կ'անցընեմ ուրախ, երջանկութեան մէջ,
Եւ իմ աչքերըս փակելէ առաջ,
Կը տեսնեմ զաւկիս քագ ու պսակը» —

ԿԵ.

Բայց եղու՞կ, այժմ նա զարնեցաւ,
Վերջին օրերու նրազնալ մարեցաւ,
Նորս հարսնացուն քրդերու մեռքին,
Ու քնակարանը հուր ու ծուխի մէջ :

ԿԶ.

Կ'ուլաք հեք մայրը արցունելը աչքին,
Կը փետտէր ներմակ մազերը գլխին,
Չայնը ամեն կողմ արձագանգ կուտար,
Անհուն ցաւի մէջ եւ ի՞նչպէս չըլար :

ԿԵ.

Վերջին անգամ նա համբուրեց կրկին,
Արթուր նակատը զարնըւած զաւկին,
Սրբեց արիւնը ներմակ մազերով,
Անգամ մը եւս սեղմեց իր կրծքին :

ԿՀ.

Ապա կանգնեցաւ նորա մարմնոյն քով
Նիհար բռունցքը ուղղած դէափ վեր
Նա անէծք կարդաց հոգւոյն խորիքէն
Արձագանգ տուին դաշտեր ու լեռներ :

ԿԹ.

— Անիծեալ լինիս , դուն ազգ ոնրագործ .
Դուն որ մահւան հետ դաշինք կապեցիր ,
Կեանիդ մէջ չըրիր ոչ մի ազնիւ գործ
Լոկ արեան գետեր չորս կողմ հոսեցիր :

Հ.

Դուն մեծ չարիքը մարդկային ազգին ,
Բու մէջ մեռած է ճգուռմ վսեմի
Տաք անապատի վառւած աւազին
Կատողած բորենուն վազրին արժանի :

ՀԱ.

Բու ամեղաստաներդ խոպան քո՞ղ դառնան
Առտերդ բերրի՝ փուշ տառասկ քող տան .
Լինսատու ցողի անձրեւի փոխսն ,
Ամպերը կայծակ կարկուտ քո՞ղ տեղան :

ՀԲ.

Արեւու լոյսը մարի քեզ համար ,
Կեանիդ ծաղիկը թառամի՛ խաղան ,
Թո՞ղ զաւակներդ աղ ու հաց մուրան ,
Աղբիւրի ջուրը ցամֆի քն առաջ :

ՀԳ.

Անիծեալ լինիք Թալէաք ու կնվէր ,
Արժան զաւակը ձեր ոնրագործ հօր ,
Որ նախնիքներուդ նման դուք քաքար
Արխնով քրչեցիք մեր հողը բոլոր :

ՀԴ.

Քար ու քանդ լինի զահը ձեր գլխին
Սարսի հիմքերէն դառնայ աւերակ ,
Օձեր , կարիքներ այնտեղ քնակին ,
Թո՞ղ վայեն բուեր , քո՞ղ ոռնայ քամին .

ՀԵ.

Ու եք հո՞ն կայ Աստւած երկնից մէջ ,
Աստերէն անդին , Աստւած մը հըզօր .
Եք զիտէ նա մօր մը կսկիծը ,
Անշո՞ւտ կը լըսէ անէծքը հայ մօր :

ՀԶ.


Ի՞նչ ըրի ձեզի . ի՞նչ էր յանցանքը
Որ սպաննեցիք զաւակըս միակ .
Ի՞նչ ըրի ձեզի , ի՞նչ էր իմ մեղքը
Որ աւերեցիք իմ տունըս համակ :

ՀԷ.

Ալ ի՞նչ մընաց ինձ այս քար աշխարհէն ,
Շուրջս մեռելներ , տունըս աւերակ .
Ի՞նչ մընաց ինձի վերջին օրերուս .
Լոկ վրէծ մունիմ , վրէծ մը միայն» :

ՀՀ.

Ու խլեց գետնէն հրացանը զաւկին,
Փամփուշտի շարան կապեց իր կրծքին,
Ծունքը դրաւ նա զաւկին մարմնոյն քով,
Զարկաւ, զարնւեցաւ եւ այնտեղ մեռաւ...:



ՀԹ.

Ուրա՛խ էր այդ օր ուրա՛խ էնվէրը,
Իր երջանկութեան չկար չափ սահման.
Զէ՞ որ զարնւրւած էին Հայերը
Զէ՞ որ կատարւած էր իր հրաման:

Զ.

Ալ չ'պիտ յիշւէր աշխարհի վրայ,
Հայու անունը չը լսուէր իսպան,
Սեւ գիծ կը բաշէր եւ պատմաբանը,
Ու Հայաստանն ալ երազ կը դառնար:

ԶԱ.

— «Ալի՛ իմ բարի
Հաւատարիմ Ալի՛
Ճեննէրը այժմ
Քեզ բաժին լինի,
Գինի տուր Ալի
իմ բաշ զօրքերուն
Գինի տուր լսմեն
Եւ ուրախ լինին:

ԶԲ.

«Թող ուրախութեան հնչեն երգերը,
«Փողերու ձայնով օրինեն Ալահը,
«Մեծ Մարգարէի պատգամը հրզօր,
«Լաւ կատարեցի՛, ուրախացէ՛ այսօր:

ԶԳ.

«Գինի քե՛ր Ալի՛,
Գինի քեր ինծի
«Գնին որ խմել
Եւ օրհնել ձեզի»—:

ԶԴ.

Ու բոլոր օրը խմեց, արբեցաւ,
Հայու արխանով շաղւած գինիէն,
Խմեց կուշտ ու կուռ եւ հպարտացաւ,
Իր հպարտութեան ալ չկար սահման :

ԶԵ.

Հոյակապ մարմար կամարին ներքեւ,
Ճոխազարդ ոսկի սեղանին չորս կողմ,
Պալատականները գոռող ու փարքամ,
Գինու գաւաքներ պարպէին ուրախ :


ԶԶ.

Ու կը պատմէին թէ ի՞նչպէս ազատ,
Սպաններ էին, անմեղ Հայերուն,
Կողոպտած նոցա բարիքներն առատ,
Գրաւած էին արտերն ու այզիք :

ԶՒ.

Ի՞նչպէս գեղանի կոյսեր Հայկական,
Եղինիկն քերեւ, թիրեւէն քնիքոյշ,
Տարած էին հարէմըն անպիտան,
Դարձուցած գերի կիրքերնուն վաւաշ :

Հոյակապ մարմար կամարին ներքեւ,
Ճոխազարդ ոսկի սեղանին չորս կողմ,
Պալատականները գոռող ու փարքամ,
Գինու գաւաքներ պարպէին ուրախ :



ՀՕՅԱԿՈՎ ՄՈՒՐՄՈՒՐ ԿՈՄՈԲԻՆ ԵԵՐԵԵ

Ա. Պ. Չալկիսիս

ԶԼ.

Ու կը պարէին ապիրատները,
Գինին գրիքադէզ հոսէր ջրի պէս
Արեւելեան դիւքիչ երաժշտուքեան ձայնը,
Թընդացէֆ մարմար կամարն հոկայ :

ԶԹ.

Եւ ահա յանկարծ խոր գիշերւան մէջ,
Լսւցան փողերու ձայներ մարտական,
Սուրերու շկայիւն, ճիերու խրխինջ,
Զէնիքերու պայքիւն, երգեր Հայկական :

Ղ.

Կարծես գետինը դողար ու քննդար,
Երիվարներու արագ վազքին տակ,
Ու հեծեալներու ահաւոր ձայնը
Հեռուն, խիստ հեռուն արձագանգ կուտար :

ՂԱ.

— «Վրէժ, կը գոռային, վրէժ ամենը,
«Վրէժ նահատակ եղբայրներուն համար,
«Վրէջ անարգւած բոլոր քոյրերուն,
«Վրէժ աքսորւած մայրերուն համար :

ՂԲ.

«Թող, հոսէ՛ չորս կողմ արիւնը կրկին,
«Ու դիակները լեռնանան վերստին,
«Մենք արի՛ն կ'ուզենի արիւնի փոխան,
«Թող սուրբ վնու՛ արդար դատաստան :

Ղ. Դ.

«Ո՞վ անուշ մայրեր, սիրասուն քոյրեր,
 «Եւ ո՞վ տանջըսած դժբաղդ եղբայրներ,
 «Զեր խոր անէծքի հուրն գեհենական,
 «Թափուր՝ մեր գլխին վառւի յաւիտեան:

Ղ. Ե.

Թէ չլուծենի մենի,
 Զեր խոր վրեժը
 Եւ ազատ ապրին
 Թալարն ու կնվերը
 Թող Հայ անունին
 Լինին անարժան
 Վայ կարդայ մեզի
 Աշխարհն համայն:

Ղ. Յ.

Սոսկումը առաւ գոռող էնվերին,
 Սի ու դողի մէջ գոյնը փոխւեցաւ,
 Մահեան դալուկը պատեց իր դէմքին,
 Գինու գաւարը ձեռքէն վար ինկաւ:

Ղ. Զ.

— «Ալի՛—ըսաւ նա իր դահնապետին,
 «Ո՞վքեր են ասոնի, եւ ուսկից կո՞ւզան,
 «Միքէ՞ մոոցեր ես դուն իմ հրաման,
 «Ալի՛, անունի անիծեալ լինի»:

Ղ. Հ.

Ու դահնապետը՝ սեւամորք Ալին,
 Նա որ տեսած էր արցունիքը Հային,
 Անքիւ զոհերը տարած իր ձեռքով,
 Լսած եւ նոցա խօսքերը վերջին,

Ղ. Ճ.

Նա որ ապրած էր այդքան ժամանակ,
 Մէծ ոնքագործներու մարմարեայ սէմքին,
 Տեսած էր նոցա գործերը վայրագ,
 Եւ դարձած ստրուկ անոնց կամքերուն:

Ղ. Ջ.

— «Տէր, իմ, ըսաւ նա, ես քեզմէ առաջ,
 «Տեսայ շատերուն իշխան եւ արքայ,
 «Որոնի խաղացին Հայուն բախտին հետ,
 «Ուզեցին վերցնել աշխարհէն իսպան,

Ճ.

«Իմ եաթաղանըս մաւեցաւ շատոնց,
 «Հայոց կեանիքերը հնձելէն յոզիած,
 «Ու բազուկներս սկարացած են,
 «Ոյժը իմ մէշէս վաղուց է անցած:

Ճ. Ա.

«Բայց ժամանակը իր յաղթ թեւերով,
 «Բաշեց սեւ քողը նոցա վրայով,
 «Հայն ապրեցաւ եւ պիտ ապրի նա,
 «Պիտ ապրի եթէ մէկ հաստ ալ մնայ:

ՃԲ.


«Ասոնք այն զարնւած արծով ձագերն են,
 «Օտար երկրի մէջ սնած ու մէծցած,
 «Օտար ժայռի մէջ, լեռներէն անդին,
 «Մայրերուն ճայնը իրենց է հասած :

ՃԳ.

«Եւ ո՞վ կարող է կեցընել անոնք,
 «Ոչ ծով ու ցամաք եւ ոչ Ալահը :
 «Վրէժի կ'ուզան վրէժի անոնք,
 «Այժմ լրացած է քո ժամանակը :

ՃԴ.

«Գիտցի՛ր վրէժի կրակը չի մարիր,
 «Հայուն բախտին հետ խաղալն է դժւար,
 «Այն ինչ նախնիքներդ ընել չ'կրցան,
 «Ցնորք է տէ՛ր իմ, դուն ալ չես կրնար» :



ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՄՆԵԼՈՐՆԵՐԸ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՄՆԵՒՈՐՆԵՐԸ

(ՊԱՏԿԵՐ)

Ա.

Երկինքներուն մէջ կանգներ եմ մինալ,
Ազատութեան տաճարին դրան առջեւ հոյաշէն,
Ռսկենամուկ եւ շողշողուն դուռն էր փակ,
Բայց հարսանեաց խրախնաճքի անուշ երգեր
կը լսէին դեռ ներսէն :

Ճրեստակային ժաղցրահնչիւն երգի հետ,
Ճնադարեան տաւիդնելու քրոնունը

բազմալար,
Արեւելքի անուշաբոյր զեփիւնն հոծ, խնկաւէտ
Բերէր երգը շատ հեռուէն, երգը քովիչ, սըր-
տավառ :

Դողդողալով կը մօտենամ դրանն այն փառա-
կերս

Երգի քովանքն ինձ էր պատեր, ես ալ կ:ու-
զեմ մտնել ներս,

Աղամանդեայ ծեծիչն քոնած, քոլոր ոյժովս
կը բաղլսէմ,
Եւ անհամբեր մէկ կողմ ժաշւած ոսկի դրան
բացւելուն ես կ'սպասեմ :

Բ.

Կը նոնչեն ծխնիները, կը բացւի դուռն այն,
հսկայ
գեղատեսիլ իրեշտակ մը սեմին վրայ կ'երեւ-
նայ :

Նա տաճարի պահապանն էր, դրան վրայ կը
հսկէր,
Ազ ձեռքին մէջ հրաբորքն եւ բոցակէզ սուր
մ'ունէր:
— «Ի՞նչ կը փնտռես դո՛ւն այստեղերն հո-
դա՛ծին—ըստ ինձ:
— «Աշխարհէն եմ — կը պատասխանեմ — հա-
լածական ու տաճուած
Արեւելքի այն նահատակ Հայ ազգի մէկ զա-
ւակն եմ
Կուզեմ զիտնալ ինչո՞ւ համար մեզի այսպէս
լժած էր,
Ազատութեան վեհ դիցուին. տաճարին մէջ
Հայ կա՞յ դեռ:
— Կեցի՛ր, կըսէ պահապանը գեղադէմ,
Չեռքի բոցեղ սրով դրան նամբան առջիս կը
գոցէ,
Մտի՛ր այդ քանձր ամպի ներքեւ պահւըտէ:
Կեցի՛ր, այսօր Ազատութեան հարսանիքի մեծ
օրն է
Հարսնեւորներ պիտ՝ գան այսօր, աշխարհի
չորս ծայրերէն,
Ամէն ազգի, ամէն ցեղի արժանաւոր անձերէն.
Մտի՛ր այստեղ եւ պահւըտէ, գուցէ հայեր
տեսնես հոն:

Գ.

Եւ ահա կ'ուզան կարգով ազգերը
Ազատութեան հարսանիքի մեծ տօնին,
Ամէնը իր տոհմիկ դրօշով
Իր սեփական տարազով :

Ահա Գերմանը իր յաղթական քանակներով,
զէնիքներով,
Ալբրինը իր անհամար եւ ահարկու նաւերով,
Ազատութեան չահակիրը, ասպետական ֆրան-
սան
Անհաշւելի լեգոններով Ռուսը հսկայ յաղթ-
անդամ:
Հոն էր Բուլկարն, Աւստրիացին, Խոալացին,
Նորվէկիը,
Նոր աշխարհի եւ մարդկութեան ախոյեանը
Ընկլ-Սկլ
Շւէտացին, Հոլանտացին, պատւախնդիր Պել-
նիքան,
Հոն էր Արեւելքի ազգը Վայրի ու մեր դահին
Թաքարը:

Դ.

Ամէնէն յետոյ բոլոքի քպքեր
Թեւին տակ զարկած, յարերն արիւնոտ,
Խաչը մէկ ձեռքին, միւսին բուրվառն էր
Կուգար եւ Հայը, իր դէմքը քախծոն:
Դարաւոր ցաւի, անվերջ գրկանիք,
Յաւիտենալան գանգատն ունէր նա,
Քաղաքակրթած մարդկային ազգի
Յառաջդիմութեան ողջակէզն էր նա:
Հեւ ի հեւ վազքով, քրտինքը նակուին,
Կը չանար հասնի հարսնեւորներուն,
Կ'աշխատէր մտնել տաճարին դոնէն
Տեսնել ազատութեան շենդ դիցուիին:

Ե.

— Կեցի՛ր—ձայնեց պահապանը գեղադէմ,
Արագութեամբ նամքան գոցեց, ձեռքի սրճվ
բոցեղէն :

Ազատութեան հարսանիքն է
Այդ մեռով գալ չե՛ս կարող :

— Ինչո՞ւ, պատասխանեց Հայը վրդոված,
Աշխարհի մէջ ինձ պէս ազգ մը կա՞յ ննշւած.
Տե՛ս, այս գիրքը իմ հէկ ցեղիս արիւնովն է
գրւած,

Եւ այս խաչը եղբայրներուս ոսկորներովն է
շինած :

Միքէ չտեսա՞ր քիւրաւորներու
Մատաղ դեռատի կեանիքները հնձւած,
Միքէ չլսեցի՛ր անքիւ զոհերու
Տառապանենիքները, վկրքերէն խոցւած :

Հարցո՞ւր Եվրատին, հարցուր Տիգրիսին
Հարցո՞ւր ձիւնապատ բարձրիկ Մասիսին
Հարցո՞ւր բող պատմեն ինչե՛ր լսեր են
Ազատութեան սիրոյն զոհւող իմ ազգէն :


Զէ՞ որ շարունակ, վեց երկար դարեր
Մէնիք նորս համար աղօք ենիք ըրեր,
Զէ՞ որ խունին ու մոմ, զոհն ու մատաղ
Նորա սեղանէն անպակաս ըրեր»— :

Զ

Ու զանաց ի զուր Հայն հարսնեոր
Համոզիլ իրեւուակը բաղցը խօսքերով,
Վկայ կը բերեր սրբերը բոլոր
Իր տառապանիքը, վիւտը դարերով :

Եւ հազար ու մէկ արցունիք, աղերսանիք
Բլրուկի լեզով քափեց ու լացաւ,
Խնդրեց, որ լսէ՛ իրեն հառաջանիք,
Բայց իր խնդիրքը պարապը անցաւ :

«Այո՛—միմնջեց իրեւուակն գեղադէմ,
Երկար դարերով արիւն է՛ քափեր
Ես այդ լաւ զիտեմ :
Բայց երէ կ'ուզես քեզ ալ ներս առնեմ
Գնա՛ քու խաչդ փոխէ սուրի հետ
Եւ դարբնէ վահան քու այդ բուրլառէդ :
Այս հարսանիքին մէջ չ'անցնիր քու խաչդ
Ազգերը այստեղ սրով են մտեր,
Ազատութեան համար Հայ բարեկամն
Ո՛չ, չեն աղօքեր հապա կը կուին.
Օ՛ն, գացէ՛ք դուր ալ կուիլ սորվեցէդ—» :



Փառf Զեզ

ՓԱՌՔ ԶԵԶ



Փա՛ռք ձեզ մարտիկներ , վեհ գաղափարի ,
Եւ ձեզ հերոսներ սուրբ ազատութեան .
Դու՛ք որ տոկացիք մրբկի , փորորկի ,
Հարրելու ուղին քշւառ Հայութեան :

Դու՛ք , տառապանիքի , ահաւոր ցախի ,
Ծով քւառութեան սև ծոցէն ծնած ,
Ասպարէզ նետւաք , բեռը ուսերնուուլ
Եւ չարչարանիքի խաչը շալակած :

Կարծես չար բաղդի դու՛ք խորք գաւակներ ,
Երրեք չ'զգացիք վայելքն աշխարհի ,
Թողած տուն ու տեղ , քողած հայրենիք
Հեշտալի կեանիքը , վարդէ անկողին :

Փա՛ռք ձեզ բոլորիդ , դու՛ք որ անծանօք
Անչուք հողի տակ հանգչիք լի յոյսով ,
Լաւագոյն կեանիքի , ազատ օքերու .
Եւ ապագայի վառ երազներով :

Դու՛ք , տարիներով փակուած բանտի մէջ
Կրեցիք ցախի ժանգոտած ռդքան ,
Ձեզ չկասեցուց բանտն ու կախաղան ,
Եւ ոչ ալ սարսեց ձեզ մահն անգամ :

Այլ ըմբռստացումի հուրը ձեր սրտին ,
Կուրծքներիդ ուռած , զլուխնիդ բարձր ,
Մահւան ահաւոր դիմքի առջևնեն
Անցաք անխռով , առանց գանգատի :



Եւ սակայն ինկաք կէս նամապարհին,
Ինկաք բարձունքը չհասած տակաւին :

Բայց դուք անմահ էք ձեր արարքներով,
Մահիր ձեզ համար անմահութիւն է,
Զեր յիշատակը կը մնայ անչէջ
Հայ ժողովուրդի հոգւոյն, սրտին մէջ :

Փառք ձեզ Ժիրայր, Ռուրին ու Քեռի,
Յակոբ ու Յաքէր, Գալուստ Արխանեան,
Բարձրիկ Նէմրութի անյաղը արծիւը
Քեզ Աղքիւր Սերոր, Սերոր Վարդանեան,
Հրայր ու Չառուս, Զէլլո ու Բաքէն,
Նշան Զաքարեան, Միեր ու Վազգէն,
Զե՞զ Վասպուրականի
Զաւակներն արի,
Քաջ Աւետիսեան
Պետօ ու Մարտիկ
Ազատ—Ռստանիկ :

Գացէ՛ք, ինչպէս ասող, ամամպ գիշերին,
Հայ ոսկէ դարու ուզմիկներու հետ
Քանի բացուած չէ ողն առաւօտեան
Մեր երկնակամարին փայլեցէ՛ք պայծառ :

Վառեցէ՛ք ջահը, վառեցէ՛ք վերստին,
Յոյսի և լոյսի կանքեղն հսկայ,
Լոյս տուէք Հայուն, լոյս մոայլ նամբուն,
Լոյսին կ'սպասէ Հայ ազգն ահա :

Փառք ձեզ, Անդրանիկ, Լիոն և Մուրաստ,
Վահան, Երեցեան, Սարգիս Ճան-Թօլատ,
Հայ ազատութեան սրբազն դատին
Նոր ոսկիրաներ, Փառք ձեզ բոլորիդ:
Փառք ձեզ որ նետուաք, հպարտ, անլրբուլ,
Մեծ խաչալներու փշապատ ուղին,
Որ ձեր բանից կեանքով ու ձեր արիւնով
Ուզեցի՛ք կեանք տալ վաղուան սերունդին :

Որ դիւցագնական անյողդողդ կամքով,
Ապալեր ժայռեր վեր մագլցելով.
Արիւնի հետքեր ետևնիդ ձգած,
Ելաք դէպի վեր, միւսու վեր բարձրացաք:
Փառք ձեզ որ հսկայ այդ բարձունքներուն
Վեհ ազատութեան խորանը կանգնեցի՛ք,
Նորա բոցավառ հնոցի կրակով,
Մեր ստրկութեան ողբան հալեցի՛ք,
Փառք որ այդ կուսու, անտառ ողբայէն
Մեր իրաւունքի սուրբ դարբնեցի՛ք :

Մահուան, Երկունիքի այս օրերուն մէջ
Դուք մխիթարութեան միակ նշոյլն էք,
Դուք պիտի վառէք հուրն ազատութեան
Դուք պիտի կանգնէք ազատ համգրուան :

Ու ձեզ ընկերներ և ձեզ եղբայրներ,
Դուք որ մայր հողի բաղցրիկ կարօտով
Հոս Ատլանդեանի հեռու ափերէն
Ինկաք նամապարի խիստ ուրախ սրտով,
Որ անհոգութեան, անտարբերութեան
Սին մտածումք դուք մէկդի նետած,

Յառաջ նետուեցաք, յսուաշ անվիատ
Մաղիկ կեսանիքնիդ ձեր ազգին զոհած :

Դարաւոր ցափ, խոր ատելութեան
Արդար զայրոյթի բուռն ցասումով,
Այնուեղ պայքարող, այնուեղ մարտնչող,
Հայ ռազմիկներուն կ'երթաք օգնութեան :

Գացէ՛ք ընկերներ, գացէ՛ք քէպէտև
Անիրաւ բաղդը քոյլ չտայ մեզի,
Այս մեծ օրերուն ձեզ հետ միասին
Հոն ռազմի դաւոր կուուիլ կողք կողքի :

Գացէ՛ք ընկերներ, մեր հոգին ձեզ հետ,
Գացէ՛ք եղբայրներ, Աստուած ձեզի հետ :

Ու ես ձեր փառքին, մեր կեանքին մատաղ
Ես պիտի կրկին քնարը լարեմ.
Զարնեմ և եռա քննոււթ քելերուն,
Նոր երգի համար լարերը պրկին,
Եւ ինչպէս արտոյս ազատ դաւուերու
Վաղ առաւօտեան կանուխ վեր ելլեմ,
Հազար խօսքերով, անոււ երգերով,
Չեր յաղը անակի օրիներգը հիւսեմ :



Բասենայ Դաւուին

ՆՈՒԷՐ ՎԵՑԵՐՈՐԴ ԳՆԴԻՆ

ԲԱՍԵՆԱՅ ԴԱՇՏԻՆ

Ա.

Զիաւորնե՞ր կամա'ց քեցէ՞f,
կամա'ց քեցէ՞f, եկ'յ ձիաւորնե՞ր,
Ու կտրիներուն քունը մի' խռովէ՞f:
կամա'ց քեցէ՞f բասենայ դաւոփն
Հոն ուր քաջերը խոր քուն են մտեր,
Ազատ օքերու քաղցր երազով
Ու վառ յոյսերով հանգիստ են մտեր:

Կամա'ց քեցէ՞f, այն տեղ Արաքսը,
Նոցա գործերուն հաւատարիմ վկայ,
Իր խոր յատակին փրփուր ժայր քելով,
Արաք աշխարհին պատմելու կ'երթայ:
Պատմելու կ'երթայ նոցա քաջութեան
Պատմելու կ'երթայ մեծ արարքները,
Որոնք քացած են Հայլ զոյութեան,
Ուղղին փառայեղ, մարտին սրբազն:

Զիաւորնե՞ր, կամա'ց քեցէ՞f,
Բասենայ դաւոփն և հոն կանգ առէ՞f,
Գերեզմաններ են ասոնք Հայ մարտիկներուն,
Հոն ծունկի եկէ՞f, հոն ուխտի եկէ՞f:

Բ

Այն կտրիներուն, որ քաջ էին ու անվախ,
Որ ազգին սէրը վառւած իրենց մէջ,
Առիւծի սրտով կուեցան խիզախ,
Զարկին, զարնեցան Բասենայ դաւոփն:
Հոն ուր Աւարեան սուրն իր ձեռքին,
—«Յառա՞ջ, ընկերնե՞ր»—կորուսար ուժզին,
—«Յառաջ, մենք պիտի փրկենք պատիւր Հայուն
Շարժեցէ՞f տղերք, ձեր հոգուն մատաղ»:—

Ու որոտացող քնդանօքներու ,
Մահասարուո գնդակներու ,
Հուր ու բոցին մէջ ,
Վեցերորդ գնդի կորիւնները ,
Ցառաջ տարժեցան :

Հուրրա՛ , ո՞վ կ'ըսէ մեռած է խպառ
Հայուն մէջէն մարած է ու անցած ,
Հին ասպիտական ոգին դիւցազանց :
Հուրրա՛ , փէտայինները կուգան ,
Վրէժխննիր սուրը կը տարժի ,
Նա պիտի վնուէ բաղդն ու ապագան :

Ու Բասենայ դաշտին ճորիքն ու ժայռերը ,
Հայու արիւնով ներկւած դաշտերը ,
Անգամ մը ևս արձագանգ տիին ,
Հայ մարտիկներու հպարտ երգերուն :
Հանգչեցէ՛ մեռելներ , զոնէ մեր ցաւին ,
Չեր չարչարանքին լսողներ եղան ,
Զէնիքի ու կուի , մարտի հաւտացող ,
Ափ մը կորիններ ուազմի դաշտ իջան :
Հանգչեցէ՛ մայրեր , հանգչեցէ՛ քոյրեր ,
Չեր պատուին համար զուռողներ ալ կան ,
Քննցէ՛ հանգիստ Հայ նահատակներ ,
Չեր եղբայրները վրէժի կուգան :

Գ

Ինչո՞ւ , փողահար . ինչո՞ւ լոեցիր ,
Շեփորդ արծար ինչո՞ւ դրիր վար ,
Աչքերդ տխուր գետինը յատած ,
Ինչո՞ւ արցունով դու վար նայեցար :
Դիտեմ , լսեցիր Աւարեանի ձայնը ,
Դիտեմ , տեսար դուն եերոսին մահը ,

Բայց նս անման է յաւիտեան կապրի ,
Նորա համբաւը երբեք չի մեռնիր ,
Նս իր տեղն ունի Հայուն հոգւոյն մէջ ,
Խորունի քանդակւած ու հոն կը մնայ ,
Խնչպէս դեռ կապրին վարդան ու Ժիրայր ,
Հայ դատին գոհւող քաշերը անման :
Հնչեցու՛ ր փողդ , հնչեցու՛ ր փողահար ,
Հնչեցու՛ ր զարքնեն Հայ մուսաները ,
Հնչեցու՛ ր ելնէ անման Ռաֆֆին ,
Հրահրէ մարած կայծերն վերստին ,
Տեսնէ քէ ինչպէս Արաքսի ափին ,
Նոր Ասլաններն , Ֆարհատն ու Կարօն ,
Քաջ Աւարեանը իր ընկերներով
Զարկին , զարնեցան Բասենայ դաշտին :

Գ

Բասենայ դաշտին ձիւնն է պատեր ,
Ծածկեր է ձիւնը Հայ երկնակամարին ,
Պահեր է անյայտ գերեզմանները ,
Անոնց որ ինկան Արաքսի ափին ,
Ու ծաղիկները վաղուց քոռմեր են ,
Հայրենի երկրին , անուկր , անխնամ ,
Դրախտի ջրերը շատոնց սառեր են ,
Լոկ հովը կը փէկ , այս հովը գուժկան :
Բայց դեռ կը լսեմ ձիւրու խրխինչը .
Ու կայծակնացայտ սմբակներու ձայնը ,
Ասպանդակներու վրայ ,
Խորխտապանծ կանգնած ,
Հայ մարտիկներու հպարտ երգերը :

Կը տեսմեմ ահա ծուխի ամպի մէջ,
 Լերկ ու բաց կուրծքերը պաղ քարին տւած,
 Հայրենի երկրին այն սուրբ ժայռերուն,
 Ետև կուռող քաջերը զինւած:
 Լսեմ տակաւին քաջ Աւարեանի,
 Ահեղ որոտը, մարտի հրաման,
 Քաջերու կողքին, սուրբ վեր բռնած,
 Խնչպէս առիւծ մը կուի պատրաստած,
 Եւ հոն տիււմանը երկչուտ, վասիոգի,
 Նա ոք կուելու երբեք սիրո չունի,
 Ոք միւտ սովոր է զարնել անզօրին,
 Ալեհեր ծերուկին, անմեղ մանուկին:
 Այնուեղ ահաբեկ կը փախչի ահա,
 Զէնքն ու սուսերը զետինը նետած,
 Ուխտ կընէ երբեք կուի չմտնել
 Հային հետ. երէ նա զէնք է առած:

¶

Բասենայ դաշտին ձիւնն է պատեր,
 Սառեր են փրփրու զրերն Արաքսի,
 Բայց դեռ Հայ կեանիք այնուեղ չէ մարեր,
 Թափուած արիւնը պարապը չանցնիր:
 Մէն մի կաթիլեն հազար ծաղիկներ,
 Հազարն ալ մէկզմէկ սիրուն և ընտիր,
 Պիտ բացւին այնուեղ նոր զարնան ծագին,
 Միայն քող շողայ արել Հայուն:



Բաղձանքը

ԲԱՂՋԱՆՔԸ

Ս. Մուրանի յիշատակին

Դերսիմա սարին ուր հովերն ազատ,
Լերան հովերը կը փչեն ուժգին,
Ուր բարձրապալց արծիւն հպարտ
Հոն բոյն կը ժինէ ժայռերու կողքին,
Այնուղիւ գոյուր եան սրբազն կուի
Ահեղ մարտին մէջ սրտէն զարնւած,
Հոն բոյնին ներքի Դերսիմա արծին
Մուրազը աչքին կորին է ինկած :

Աշիրէր ները լերան քրքական
Հայ քաջերուն հետ կուէն յաղթական,
Դարձած կանգներ են լուռ ու տխրադէմ
Շուրջը էն նիւան Մուրատին զարնւած,
Ու մեծ Ապյատը ծեր և ալեհեր
Ծունկի է եկած նորա մարմնոյն քոլ,
Նա որ լաւ գիտէ հերոսին յարգը
Կը կասէ վերքը իր իսկ ձեռքերով :

Գլուխը դրած Գուրգէնի կրծքին
Կրակ աշերը սեւոս հեռուն
Հոն ուր քանդեր էր քարարը վայրագ
Ողջ հայրենիքը վերան աւերակ:
Ախ մը կը քոլի նորա ըրք ներէն
Դեմքը կամացուկ մէկ կրոմը ըրջած
Արցունիքի առաստ ժիրեր աչքերէն
Կը հոսին արագ արեան հետ խառնած :

— Մուրան սիրելիս ի՞նչ պատահեցաւ

Մուրատ քու ազիզ հոգուդ ես մատաղ ,
Ըսէ՛ աղբերջան վէրքը քեզ տանջեց
Ինչու քու սիրող այստան տխրեցաւ ,
Դուն որ տասնվեց երկար տարիներ
Սար ու ձոր ընկար քու ազգիդ համար ,
Որ օր մը հանգիստ դադար չգտար
Գլուխդ դնելու քար մ'իսկ չ'ունեցար
Երջանիկ էիր և ուրախ էիր ,
Քանի քու ազգիդ սիրոյն այդ ցաւը
Իր ազատութեան և բարօրութեան
Համար զրկանիքը սիրով տանէիր ,
Այժմ ի՞նչ եղաւ — ըստ Գուրգէնը
Մուրատ միթէ դուն մահէ՞ն վախեցար :
Բայց նա միւսու լուռ էր և աչքերն անբարք
Ուղղած հեռաւոր հորիզոնն բոցալան ,
Ուր հայրենիի աւերակներէն
Ծուխն ոյոր մոլոր գեռ կը բարձրանար ,
— Տղերք նա ձայնեց խիստ տկար ձայնով
Եւ իմ բարեկամն Սայիտ քաջարի ,
Ես պիտի մեռնիմ գիտեմ և շուտով
Սակայն ես մահէն երբեք չեմ վախնար :
Իմ ցաւս է միայն որ դժբաղդ ազգիս
Խոր տառապանիի , անհուն զրկանիի
Այս սև օրուան մէջ մինակ թողուցած ,
Պարտիս կիսկատար այսպէս շուտ կ'երթամ :

Գիտեմ լաւ օրը անշոււտ պիտի գայ
Պիտի գայ այո՛ վաղ կամ անազան
Երջանիկ օրը հայ ազատութեան
Բայց ես ալ կ'երթամ մուրազս չառած :

Աստւած կը սիրէք երբ որ գարուն գայ

Մեր երկնակամարին բացւի արեգակ
Պանդուխտներու կարաւանը ծայր տայ
Ընկերներ խնդրեմ զիս ալ չմոռնաք — :

Լոեց և շունչը հատաւ կորճին
Վերջին ակնարկ մ'ալ նեսեց նա հեռուն ,
Մահիան խոր քննով փակեց աչքերը
Գլուխը Գուրգէնի գրկին մէջ ինկաւ :

Դերսիմա սարը հովերն կը փչեն
Ուր բռնաւորին հետքն իսկ չկայ ,
Յաղը կաղնիները սուեր կը ձգեն
Հայ նահատակի ժիրիմին վրայ :
Նա կը հանգչի հոն հանդարտ անվրդով
Ազատ օրերու երջանիկ յոյսով ,
Մինակ իր ազգի այդ ուրախ օրւան
Լոյսը տեսնելու անհուն կարօտով :



ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ



	Էջ
Վրէժինդիր Զայներ	19
Աղատութեան Հարսնեորները	81
Փառք Զեզ	89
Բասենայ Դաշտին	95
Բաղձանքը	101

ՀՀ Ազգային գրադարան



NL0352867

47184